Եայլա, Գեղիկ, Գեղիկ, Քեօփրի–Եայլա, Գոցախոռ, Զարթենիս [1], Քցխա, *իսկ ճախակողմեան՝* Թուէմաչ, Կոթիկ, Մեշետուր, Արտոստ, Որջոխ [2] (*Ուղթիքի Որջնհաղ*), Փեստափոր, Ջուջուրիս, Սեխձոր, Սեխջիկ, Ընկուզէf, Լուսփակ, Իծաձոր, Զարմոգ [3],

---

*տաւորուած էին ու բարտաւեան աշխարհում իրենց ապարանքները թողնելու արշաւականներին եւ հեռանալու. Ըրդ դարի վերջերին։*

*[1] Զարթենիս. (Զարդանիս քարտէզների վրայ). հին անուններից մէկն է, որ այնպէս կպել ու ամրացել է, որ ոչ միայն Սելջուկները, այլ նոյն իսկ Լալա-Փաշաները չեն կարողացել ջնջել։ Գեղն Օթիից միայն 5 կիլոմետր հեռու է գտնւում Կըլըջ-Արփ անտառապատ լ-րի բարձունքներից մէկի վրայ Կալա-բողաս (Կիրճա-բերդ) բերդի ամրոցների մօտ. երեւում է, որ Նախարարական ոստաններից մէկի զարդն է եղել եւ դրացիների նախանձը գրգռած։ Նախապատմական, պատմական քարուկիր շինութիւնների, դղեակների, աշտարակների հետքերը քառասուն դար յետոյ էլ կարող են խօսել խուզարկուին, թէ եղել են դեղարուեստի գործերը եւ հիւսուած են բնիկների ձեռքով։*

*[2] Որջոխ (Որջնհաղ) բերդանունը մեզ յիշեցնում է Ջ.–ԺԳ. դարերի այն բոլոր պարագաները, երբ երկրի քաղաքական եւ զինուորական գործիչները, ընկճուած որեւէ առթիւ, թողնում էին գործ, պաշտօն, նոյն իսկ կալուածք, ամէն ինչ եւ փախչում ապաստանում էին Ուղթիքի իրենց ամրոց-թաքստոցները. սպասում էին յարմար եւ պատեհ առթի, որ կարողանան կրկին վերադառնալ իրենց պաշտօնավայրը։ Բայց Սիմրի գետակը թափուած Որջխ առուակի վրայ շինուած այս բերդը այնքան անառիկ եւ անմերձենալի չէ, ինչպէս Ճորուխի ափի, խալխալի մօտերքը գտնուած Արջոխը-Որջնհաղը. որի ամրութիւններն ու դիրքը ամեհի եւ անմերձենալի են։*

*[3] Զարմոգ կամ Չարմոգ. Լուսփակի եւ Իծաձորի (Իրիցաձոր) մէջ բարձունքում մի լերան լանջի, այրերից եւ Լեոփեկ (Լուսփակ) լեռներից ոչ շատ հեռու է գտնւում,*